ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2025թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը, ընդհանուր՝ 21.974.565,20 (քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ դրամ քսան լումա) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևանի ենթակայության մարզադպրոցներին՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի ———————— թ.
N ——- որոշման

| Մ տարեսկզբին | | Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազի գրասենյակ (ՀՀԳԴ) | | Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևանի քաղաքային ոստիկանություն (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ավանի բաժին (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Կենտրոն վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Նորք-Մարաշ վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Դավթաշեն վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Արաբկիր վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Էրեբունի վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Նուբարաշեն վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Ավան վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Նորք վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Մասիս վարչական շրջան (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Տավուշ մարզի Իջևան համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիք մարզի Գավառ համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Կոտայք մարզի Աբովյան համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Արտաշատ համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Լոռի մարզի Վանաձոր համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Գյումրի համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Սյունիք մարզի Կապան համայնք (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ) | | Հայաստանի Հանրապետության Ֆինանսական մոնիտորինգի կենտրոն (ՀՀՖՄԿ) | | Հայաստանի Հանրապետության Ազգային ոստիկանություն (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Ազգային հետաքննության ծառայություն (ՀՀՊ) | | Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա մարզագույքերը (թվով 1323 մարզագույք) Երևանի ենթակայությամբ գործող 30 մարզադպրոցներին սեփականության իրավունքով անհատույց օտարելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ: Որոշման ընդունման արդյունքում համայնքապատկան մարզադպրոցները կհամալրվեն միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր մարզագույքերով, ինչը մեծապես կնպաստի Երևան քաղաքում սպորտի զարգացմանը, մանուկների և պատանիների արտադպրոցական կրթության և մարզադպրոցներում ֆիզիկական դաստիարակության շարունակական զարգացմանը, կարևոր դերակատարություն կունենա սպորտի ասպարեզում շնորհալի և օժտված երեխաների սպորտային ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը, ինչպես նաև կնպաստի սպորտային արդյունքների բարելավմանը:

Համայնքապատկան մարզադպրոցներին սեփականության իրավունքով անհատույց օտարվող գույքը ձեռք է բերվել Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեում նախատեսված ծրագրի շրջանակներում, մրցութային կարգով և համայնքապատկան մարզադպրոցներից ստացված պահանջագրերի հիման վրա: Երևան քաղաքի 2025 թվականի «Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրի իրականացման արդյունքում ձեռք է բերվել 39 անուն 1323 մարզագույք, որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 21.974.565,20 (քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ դրամ քսան լումա) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքը սեփականության իրավունքով օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ